600.0137.12.04.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ապրիլի 2017 թվականի №137Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) որ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) 2011 թվականի հունիսի 1-ի №277Ա որոշմամբ «ՏԱՔՍԻ ՊՐԵՍՏԻԺ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրվել է ռադիոհաճախականությունների օգտագործման №0943 թույլտվությունը,

բ) «ՊՐԵՍՏԻԺ ԼԵՆԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ ընկերություն) 2017 թվականի մարտի 23-ի՝ «ՏԱՔՍԻ ՊՐԵՍՏԻԺ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անվանափոխության վերաբերյալ գրությունը,

գ) ընկերության 2017 թվականի ապրիլի 3-ի՝ իր 2017 թվականի մարտի 23-ի գրությանը ընթացք չտալու և «ՏԱՔՍԻ ՊՐԵՍՏԻԺ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված ռադիոհաճախականությունների օգտագործման №0943 թույլտվությունն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ գրությունը, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը, 17.1 հոդվածը, «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետը, 78-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 11-ի №231Ն որոշումը՝ հանձնաժողովը որոշում է.

1. Ուժը կորցրած ճանաչել հանձնաժողովի՝

   1) 2011 թվականի հունիսի 1-ի «ՏԱՔՍԻ ՊՐԵՍՏԻԺ» սահմանափակ պատասխա-

նատվությամբ ընկերությանը ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №277Ա որոշումը,

2) 2014 թվականի հուլիսի 23-ի «ՏԱՔՍԻ ՊՐԵՍՏԻԺ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե գումար փոխանցելը պարտավորեցնելու մասին» №289Ա որոշումը,

3) 2015 թվականի օգոստոսի 12-ի «ՏԱՔՍԻ ՊՐԵՍՏԻԺ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ռադիոհաճախականությունների օգտագործման պարտադիր վճարների և հաշվարկված տույժերի գումարները Հայաստանի Հանրապետության պետական բյուջե գումար փոխանցումը պարտավորեցնելու մասին» №285Ա որոշումը,

4) 2016 թվականի նոյեմբերի 29-ի «ՏԱՔՍԻ ՊՐԵՍՏԻԺ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ռադիոհաճախականությունների օգտագործման պարտադիր վճարների և հաշվարկված տույժերի գումարները Հայաստանի Հանրապետության պետական բյուջե գումար փոխանցումը պարտավորեցնելու մասին» №350Ա որոշումը:

2. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում 900005281812 հաշվեհամարով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել ռադիոհաճախականության օգտագործման վճարի մասով մինչև 2017 թվականի ապրիլի 3-ը հաշվարկված 115 250 (հարյուր տասնհինգ հազար երկու հարյուր հիսուն) դրամ պարտքը:

3. Ընդունել ի գիտություն, որ ընկերությունն իրավասու է՝

1) սույն որոշման հրապարակումից հետո երեսնօրյա ժամկետում միջնորդել հանձնաժողովին՝ վերանայելու այն,

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, բացառությամբ սույն որոշման 1-ին կետի, որն ուժի մեջ է մտնում 2017 թվականի ապրիլի 3-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք.Երևան
12 ապրիլի 2017թ.